



ԱՎԵՏԻՔ ԻՍԱԻԱԿՅԱՆ

Սիրո վեպը

Հոգնել եմ սիրելուց ես արդեն, և տաղտուկ է պատճառում ինձ սիրային վեպը։
Սակայն մի փոքրիկ վեպ, սիրո մի թերատ վեպ, միշտ հնչում է իմ ականջում, և
լավ չեմ հիշում՝ երազո՞ւմս եմ լսել այդ վեպը, թե՞ արթմնի, ասես հին-հին դարերի
մի հերիաք լինի այդ, որ հյուսել է մի հարազատ ոգի, հեռավոր մի
աշխարհում . . .

Կանաչ ծաղի տակ նստել էր մի գուսան՝ կրծքին գրկած մի սազ, որը միայն մի
լար ուներ, մի քնքուշ լար։

Կանաչ ծաղի մոտով հոսում էր մի երգող առվակ։ Նրա բյուրեղային ալիքները
երգում էին այն ոսկեղող ամպերի մասին, որոնք պսակում են լեռների աղամանդի
ճակատները, որտեղից նրանք վայր են ցատկել և երգում էին այն զմրուխտյա
դաշտերի մասին, որտեղից հոսել եկել էին կարկաչելով։

Գուսանը մեղմիկ զարկում էր լարին, և հեծկլտում էր լարը և պատմում էր լարը
սիրո մի փոքրիկ վեպ։

Հոյակապ դոյյակում ապրում էր մի չքնաղ աղջիկ, այնսպե՞ս գեղեցիկ, այնպե՞ս
գեղեցիկ, ինչպես շուշանագեղ կարապը լճի ոսկեվատ ալիքների վրա։ Նստել է
պատշգամբում և ասեղնագործում է։ Հեռավոր երկրից եկել է մի պատանի։
Ծնառիր կանգնել է գեղեցիկ աղջկա դոյյակի առաջ, պատշգամբի տակ ու սեր է
աղերսում։

«Քո սիրո համար ես մոռացել եմ
Հայր և մայր, հայրենիք և աշխարհն ամբողջ
Իմ երջանկությունը քո ոտների տակն է այսուհետ:
Նայիր ինձ գեթ մի անգամ»:

Աղջիկը սակայն չի լսում նրան . ասեղնագործում է նա և երազում:

Նա հիշում է, թե ինչպես մի օր, մի ասպետ նժոյզով՝ անցավ դոյակի առջևով .
Միայն մի անգամ նայեց նրան և ասպանդակեց իր ձին, բայց սիրով խոսեց նրա
կուսական սիրտը, իսկ անգութ ասպետը գնաց, գնաց առանց ետ նայելու:

Նա լալիս է անմիտքար, թողել է դոյակը, առել է մի երկաթե ցուպ, թափառում է
աշխարհե-աշխարհ, ծեծում է ամեն մի դուռ, նայում է ամեն մի դեմքի՝ գտնելու
համար իր սիրած ասպետին, որը գնաց, գնաց . . .

Իսկ հեռավոր երկոց եկած պատանին ծնրադիր՝ նորից սեր է աղերսում և ասում
է .

«Ճողիս քաղվում է քեզ համար,
Դարեր և դարեր կկանգնեմ
Քո դռան առաջ ձյունի ու մրրիկի տակ:
Եվ միայն մահը կարող է ինձ քաժանել քեզանից:
Դու ես իմ սերը - իմ կյանքն ու մահը . . .»:

Աղջիկը սակայն չի լսում նրան: Աստեղնագործում է նա և երազում: - Գտել է նա
իր սիրածի հետքը, ահա գտել է նաև իր սիրածին . և արտասվելով իր անհուն
սերն է հայտնում նրան, բայց, ավա՞ն, իր երազած ասպետը չի լսում նրան . նա
գնում է մի հեռավոր աշխարհ . նա գնում է իր սիրո հետևից, կամ կտիրանա իր
սիրուն, կամ ետ չի դառնա, ել ետ չի դառնա . . .

Օրերն անցնում են օրերի հետևից, և հեռավոր երկրից եկած պատանին ծնրադիր
նորից սեր է աղերսում և . . .

Հեծկլտաց բնքուշ լարը, դողաց, թրթոաց և կտրվեց հանկարծ:

Կանաչ ծաղի տակ նստած մնաց զուսանը՝ կրծքին գրկած սազը՝ առանց լարի, և սիրո այս փոքրիկ վեպը մնաց կիսատ: Սակայն այն թերատ վեպը միշտ հնչում է իմ ականջում, և լավ չեմ հիշում՝ երազո՞ւմս եմ լսել այն, թե՛ արթմնի, ասես, հին-հին դարերի մի հերիաք լինի, որ հյուսել է մի հարազատ ոզի հեռավոր մի աշխարհում:

Թիֆլիս